



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ մաքա ամսի 5-8-ին Կահիրեում գումարված Եպիսկոպոսական ժողովում Էրեբունի կարևոր հարցերից մեկն էր նախ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՅՈՒՆ:

Նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետը Եպիսկոպոսական ժողովում հանգամանորեն ներկայացրեց Եկեղեցական Սահմանադրության կազմության հարցի նախընթաց պարագաներն ու պատմությունը: Եկեղեցական Սահմանադրության կազմության հարցը արդարև հին է և ունի իր պատմությունը: Եկեղեցական Սահմանադրության մի նախագիծ առաջին անգամ ներկայացվեց 1945 թվականին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-Եկեղեցական պատկառելի ժողովին: Համազգային սրբազան հոգևոր իր երրորդ նիստում, հունիսի 19-ին, Բնության առավալյն և Սահմանադրության նախագիծը գրանելով քերի՝ որոշեց պարտականություն դնել Գերագույն Հոգևոր Խորհրդի վրա վերամշակել այն և քննել քննադատություններն ու դիտողությունները լսելուց հետո, սրբազան, ներկայացնել Ազգային-Եկեղեցական ժողովին:

1955 թվականին, Նորին Ս. Օծուրյուն Ս. Ս. Վազգեն Ա. Լուրենտի Հայրապետի նախագահության տակ գումարված Ազգային-Եկեղեցական ժողովը, հոկտեմբեր 5-ի իր երրորդ նիստում, Բնության առավ Սահմա-

նադրության հարցը: Ժողովի գումարումից առաջ Մայր Աթոռում կազմվել էր հինգ եպիսկոպոսներից բաղկացած մի հանձնաժողով, Սահմանադրության հարցով զբաղվելու և ժողովում գեկուցելու համար: Հանձնախումբը ուսումնասիրեց Սահմանադրության նախագիծը, ունեցավ զաղափարների փոխանակություն և եկավ հետևյալ եզրակացության. «Սահմանադրության ծրագիրը քննելուց կերպով ուսումնասիրված է, սակայն այն չի գոհացնում առաջադրված քննելու պահանջներն ու պայմանները. դրա համար առաջարկվում է, որ այն հանձնվի նոր կազմվելիք Գերագույն Հոգևոր Խորհրդին, որպեսզի վերջինս ավելի լայն կերպով ուսումնասիրելուց հետո քերի Ազգային-Եկեղեցական ժողովին ի վավերացումը»:

Նորին Ս. Օծուրյուն Ս. Ս. Վազգեն Ա. Լուրենտի Հայրապետը իր բնութայնից հետո անձամբ գրավեց Եկեղեցական Սահմանադրության նախագծի վերամշակման հարցով և այդ մասին անդրադարձավ Եպիսկոպոսական ժողովում:

Կահիրեի Եպիսկոպոսական ժողովը առաջադրական և օրինավոր գտնելով Նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետի քննադատությունը, միաձայնությամբ որոշեց կազմել Եկեղեցական Սահմանադրությամբ զբաղվող բարձրաստիճան հոգևորականների մի հատուկ մարմին, որն իր եզրակացությունը պետք է ներկայացնի Գերագույն Հոգևոր Խորհրդին, և վերջինս էլ այն «վերահաստատության ենթարկելն հետո, հղել քննել, անոնցմե ալ նկատողություններ ստանալ»:

եւո՞ք տա մեւ Սահմանադրության նախագծին իւր վերջնական ձեւը:

Նկեղեցական Սահմանադրության նախագծի վերամշակման հանձնախմբի անդամ Բնորվեցին Նրոսաղեմի Պատրիարքական Աթոռի անդապան Տ. Յոյիշե արհիպիսկոպոսը որպէս նախագահ, Տ. Տիրան արհիպիսկոպոսը, Տ. Նարայր և Տ. Գերեմիկ Եպիսկոպոսները:

Կազմվող Նկեղեցական Սահմանադրության կապակցությամբ Կանխիկ Եպիսկոպոսական ժողովում որոշվեց.

1. Նոր կազմվող Նկեղեցական Սահմանադրության մեջ ի նկատի առնել Եպիսկոպոսական ժողովի գոյությունը, համաձայն 1955 թվականի Ազգային-Նկեղեցական ժողովի որոշման:

2. Նկեղեցական Սահմանադրությունը պետք է ունենա հատուկ կարգավորություն, որտեղ որոշ կերպով նշտորոշված լինեն Գերագույն Հոգևոր Խորհրդի, Եպիսկոպոսական ժողովի, Ազգային-Նկեղեցական ժողովի իրավասությունները և ստեղծվեն շրջանական, առարկայական պայմաններ, առաջին առնելով համար այնպիսի անպատեհություններ, որոնք հաճախ սպառնում են եղծել, խաբարել Հայաստանյայց Առաքելական Նկեղեցու իսկական դիմագիծը և ազգային-Նկեղեցական միասնությունը:

3. Նկեղեցական Սահմանադրության մեջ բնորոշվի իր ամբողջության մեջ Հայաստանյայց Առաքելական Նկեղեցի՝ իր բոլոր նվիրապետական Արքաներով, և նշտորոշվեն նվիրապետական Արքաների իրավասության և փոխհարաբերության սահմանները:

Նկեղեցին, որպէս աստվածահաստատ, հոգևոր-քառյակն մի մեծ հաստատություն, իր հավատով, դավանաբանությամբ, վարդապետությամբ անվտանգ է և հավիտենական: Բայց Նկեղեցին ապրում է ու գործում մարդկային հասարակության մեջ, առաջ բերելով փոխհարաբերություններ Նկեղեցու և իր անդամների միջև, Նկեղեցու և պետության միջև, Նկեղեցու և հասարակության մեջ գործող այլ հաստատությունների միջև:

Բոլոր ժամանակներում Նկեղեցին իր անդամներին և հավատացյալներին դաստիարակել, առաջնորդել ու ղեկավարել է որոշ կերպով և որոշ ուղղությամբ և առաջին է առել պատահականությանց, կամայականությանց և մոլորությանց, հաստատելով կանոններ, օրենքներ, կարգեր և ավանդություններ: Այս ձևով են սահմանվել Նկեղեցական իրավունքի բովանդակությունը և սահմանները:

Նկեղեցին այս տեսակետից մտնում է իրավական հասկացողության մեջ, կազմվում է Նկեղեցական վարչություն, որոշ կարգ ու կանոնով և օրենքներով, որը ղեկավարվում է Բրիտոնական կրոնի սկզբունքներով և Նկեղեցվո ավանդություններով: Նկեղեցական կանոնները կազմվում են Նկեղեցու ամբողջության համար և պարտադիր են Նկեղեցու բոլոր անդամների համար:

Հայաստանյայց Նկեղեցին բազմադարյան գոյություն ունի, բայց մինչև այժմ չունի իր հաստատված, գրավոր, որոշ ձև ստացած Նկեղեցական Սահմանադրությունը:

Անցյալ դարի 30-ական թվականներից սկսած, Ռուսական և Օսմանյան կառավարությունների կողմից փորձեր կատարվեցին կազմելու Նկեղեցական սահմանադրություններ Հայ Նկեղեցու բնոյնաբան ղեկավարության համար:

Այդպիսի սահմանադրություններից մեկը հանդիսացավ ՊՈԼՈՒՆԵՄՆԵ, իսկ մյուսը՝ ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ:

Յարական Ռուսաստանի պայմաններում Հայ Նկեղեցու և պետության հարաբերությունները սահմանվեցին և նշտվեցին ՊՈԼՈՒՆԱՅՈՒԼ կամ «բարձրագույն կարգադրություն» կոչված կանոնադրությամբ, չլազա կառավարութեան Լուսաւորչական հայոց ի Ռուսաստանը:

Պոլոնեիան ցարական Ռուսաստանի կառավարության կողմից մշակված օրենք էր, կազմված Հայ Նկեղեցու ղեկավարության համար: Պոլոնեիայի հիմնական սկզբունքներով Հայ Նկեղեցին պետության մեջ նաեւալվում էր որպէս իրավական անձ, իսկ հայ ժողովուրդը՝ որպէս կրոնական-մշակութային համայնք:

Պոլոնեիան բաղկանում էր 10 գլուխներից և 141 հոդվածներից: Դա յուրահատուկ մի կանոնադրություն էր Ռուսաստանի մեջ, Հայաստանյայց Նկեղեցու վարչական գործերի կարգավորման և ղեկավարման համար, տվյալ պատմական ժամանակաշրջանի՝ ցարական Ռուսաստանում հայ ժողովրդի համար ստեղծված առանձնահատուկ պայմանների մեջ:

1836 թվականին, Հովհաննէս Կարբեցու օրով, Պոլոնեիան կազմվեց և կայսերական վավերացում ստանալով, մարտի 11-ից սկսեց նրա գործադրությունը: Պոլոնեիան կազմելու համար արհունիքի կողմից նշանակվեց չորս հոգուց բաղկացած գաղտնի մի հանձնաժողով, որի կազմի մեջ էին մտնում գինվարական իշխան Բենբոյրյանցը, Սերովրե վարդապետը, Շահան Զրպետյանը և լեւ ազնվական Օշկինը:

Պոլոմենիան մեծ ազդեցություն ունեցավ որպես եկեղեցական կանոնադրություն ողջ հայության ներքին կյանքի և նախատգրի վրա: Պոլոմենիան զուտ եկեղեցական կանոնադրություն չէր միայն, այլ նաև մասնատանու ապրող հայ ժողովրդի ազգային-մշակութային իրավական գոյությունը նշտորոշող օրենք: Հայ ժողովուրդը, կորցնելով հասարակական, ազգային-հաղափական ամեն իրավասություն, համախորհվում էր եկեղեցու շուրջ և դառնում կրոնական-մշակութային մի համայնք:

Քյուրիայում, Օսմանյան պետության հետ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հարաբերությունները սահմանված ու նշտորոշված են եղել ԱԳՎԱՅԻՆ ՍՍՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ անունը կրող կանոնագրությամբ, որն իր վերջնական ձևը առավ ուսույթների կողմից վավերացվեց 1863 թվականի մարտի 17-ին:

Ազգային Սահմանադրությունը բաղկանում էր 99 հոդվածներից:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կազմակերպչական և վարչական ղեկավարման գործում, պետական աղբյուրների մեջ երկրորդ տեղն է զբաղում Ազգային Սահմանադրությունը:

19-րդ դարի առաջին կեսերին, Քյուրիայում ապրող ոչ իսլամ հասարակությունները ունեցան իրենց սեփական ազգային կանոնադրությունները, ազգային-կրոնական ինքնուրույնությունը, Օսմանյան կառավարության կողմից նախաշված, հաստատված ու վավերացված:

Ազգային Սահմանադրության ուսումնասիրությունն ու քննությունը ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության մեջ եւ հայ ժողովուրդը ճանաչվում էր որպես լոկ «կրոնական համայնք»:

Ըստ Սահմանադրության, ազգային-եկեղեցական վերին իշխանությունը Ընդհանուր ժողովն էր, 140 հոգուց բաղկացած, որոնցից 20-ը միայն, այսինքն մեկ յոթերորդ մասը եկեղեցականներ էին:

Պատրիարքը քեկ ըստ Սահմանադրության Ազգի գլուխն էր հռչակված, բայց նրա իշխանությունն ու հեղինակությունը սահմանափակված էին կրոնական ու քաղաքական ժողովներով:

Ազգային Սահմանադրության սկզբունքների լույսի տակ, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու վարչությունը Քյուրիայում հանձնվում էր աշխարհականներին:

Նվ, ինչպես ժամանակին նշվել էր, «Ազգային Սահմանադրությունը չափազանց դանդաղաշարժ մի մեքենա էր, բառակրթի

մի անիվ, որը չէր կարող տեղից շարժվել ու հառաչանալ»: Այնուամենայնիվ, 19-րդ դարի երկրորդ կեսերից սկսյալ, քյուրիայի ազգային-եկեղեցական կյանքի վրա մեծ ազդեցություն ունեցավ Ազգային Սահմանադրությունը, մինչև 1891 թվականը, երբ Քյուրիայում ապրող հայ ժողովրդի և Հայ եկեղեցու համար սկսվեց մոռալ և արյունոտ իշխանության մի ժամանակաշրջան, դաժանորեն նեղվեց ազգային ամեն մի շարժում և արյան մեջ խեղդվեց հայ ժողովրդի ազգային, մշակութային, եկեղեցական զարթոնքը: Սուրբանական կառավարությունը հետևողականորեն աշխատում էր կրճատել այն «առանձնաշնորհումները», որ Ազգային Սահմանադրությունը տալիս էր հայերին որպես կրոնական համայնքի:

Հայ ժողովուրդը, մինչև Հայաստանում հայկական պետության հաստատումը, միջազգային օրենքի առաջ ոչ ազգ էր, ոչ պետություն, այլ կրոնական համայնքի անվան տակ փոքրամասնություն ճանաչված մի ազգաբնակչություն, որին շնորհվել էին տիրապետող պետության կողմից մի շարք մշակութային և վարչական սահմանափակ իրավունքներ, և որոնք փաստորեն որևէ հրաշխիք չէին տալիս հայ ժողովրդի և Հայ եկեղեցու կյանքի և գոյության ապահովության տեսակետից: Պոլոմենիան և Ազգային Սահմանադրությունը մեր ազգային-եկեղեցական ավանդությունների, ողջ պատմության և հայ հոգու խորք, օտար և վերևից պարտադրված պետական կանոնադրություններ էին, որոնք ոչ մի չափով վտանգի ժամին չէին կարող և արդարև չկարողացան էլ ապահովել ոչ Հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու անկախությունը և ոչ էլ հայ ժողովրդի ինչքը և կյանքը:

Այսօր այդ բոլոր անցյալի տխուր և դառն հուշեր են միայն: Պոլոմենիան անցել է պատմության արխիվը: Իսկ ինչ վերաբերում է Ազգային Սահմանադրության, նա այսօր գործադրելի է մասամբ միայն Քյուրիայում հայ եկեղեցական կյանքի նկատմամբ: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը մինչև այսօր էլ չունի պետականորեն ճանաչված և եկեղեցականորեն վավերացված իր ստատուսը:

Իսկ Սիվյուսում ցրված հայ համայնքները, մեր առաջնորդական քեմերը ղեկավարվում են Ազգային Սահմանադրությունից վերցված կամ ներշնչված որոշ սկզբունքների, կանոնների հիման վրա՝ տեղական պետական օրենքներին և կյանքի պայմաններին

պառաշանցված ներքին կանոնադրություններով: Այդ կանոնները բնդանուր բնույթ կրող ժողովրդավարական սկզբունքներ են եկեղեցական, ազգային մարմինների բնաւորական և զործունեւորական վերաբերյալ, և որոնք նվիրագործված սկզբունքներ են մեր եկեղեցւոյ, ինչպես նաև այլ ժողովրդական եկեղեցիների համար:

Այսօր հայ ժողովուրդը, փյունիկի նման վերածնված իր ավերակներից, տերն է իր Հայրենի հողին վրա իր կյանքին, իր նախատաքին և իր ապագային: Այսօր հայ ժողովուրդը իր պատմական հողերի մի մասի վրա ունի իր կազմակերպված պետական կյանքը, պետական վեհաժողով իրավունքներով, իր Սահմանադրությամբ, որոնք ապահովում են հայ ժողովրդի կազմակերպված կյանքը իր բոլոր երեսների վրա: Այս բոլորը խոստումնալից և ապահով հեռանկարներ են ստեղծել Հայաստանյայց Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր զարթոնքի, կազմակերպական ու վարչական կյանքի ու զործունեւորական համար:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, այսօր ավելի քան երբեք, կանգնել է իր հոգեւոր, կազմակերպական-վարչական կյանքին ու զործունեւորւթյունը պատկերացնող, կանոնավորող, եկեղեցական մի բնդանուր ու միասնական Սահմանադրություն ունենալու անհրաժեշտության առաջ, մի Սահմանադրություն, որն իր բնդանուր գծերի մեջ բնդգրկի մեր Ս. եկեղեցւոյ ամբողջականութունը, իր պատմական կենտրոն Ս. Էջմիածինն ունենալով որպէս զլուխ, իր նվիրապետական բոլոր Արքայանքով, Բեմերով և բովանդակ հավատացյալ ժողովրդով:

Եկեղեցական Սահմանադրության մեջ պետք է հստակորեն նշվի, որ ՄԻ է ԵՎ ԱՆՐԱՍՏԱՆ ԶԱՅՍՍԱՆՅԱՆՅԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ, որի զարավոր ու պատմական կենտրոնն է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, և նրա Դանակայր՝ Ամենայն Հայոց Հայրապետը, իրավասու երկայնացուցիչն է Հայաստանյայց եկեղեցւոյ պետությունների տեսակետից, ըստ միջազգային օրենքներով և ավանդությամբ բնդունված կարգի:

Անհրաժեշտ է, որ Ամենայն Հայոց Հայրապետը իր իրավական տեղը կարենա գրավել միջազգային հարաբերությունների մեջ:

Այս են պահանջում քե՛ մեր բազմադարյան եկեղեցւոյ հեղինակությունն ու վարկը և քե՛ մանավանդ ի սիյոսոս աշխարհի ցրված հայ հավատացյալ ժողովրդի գերագույն շահերը:

Եկեղեցական նոր Սահմանադրությունը պետք է լինի իր բնդանուր գծերի մեջ

եկեղեցական սահմանադրական օրենքներ գծող մի օրինագիրք այն պարզ պատճառով, որ Հայաստանից դուրս գտնվող մեր մյուս նվիրապետական Արքայանք, Բեմերն ու եկեղեցիները վարչական-կազմակերպական իմաստով կարողանան համաձայնեցնել իրենց կյանքն ու զործունեւորւթյունը, համապատասխան տեղական պետական օրենքներին և պայմաններին, միշտ հավատարիմ մնալով սակայն մեր զարավոր եկեղեցւոյ հոգեւոր ավանդներին, ժողովրդական սկզբունքներին և ազգային պատմությանը:

Մեր եկեղեցւոյ վարչական-կազմակերպական կյանքի համար կենսական նշանակություն են ունեցել 64 կանոնադրություններ՝ Առաքելոց և Ս. Հարց, Տիեզերական և տեղական ժողովները, մեր եկեղեցական կանոնագրերը, հայրապետական կոնդակներն ու հրահանգները, և եկեղեցական-պետական փոխհարաբերություններին վերաբերող գրությունները: Այս աղբյուրները եկեղեցւոյ ունենալով, պետք է մշակվեն եկեղեցական Սահմանադրության սկզբունքները, միշտ եկատի ունենալով ժամանակի ոգին ու պահանջները:

Եկեղեցական Սահմանադրություն մշակելու անպայման պետք է նկատի ունենալ նաև եկեղեցական արտաքին իրավունքը, ինչպես այդ արվել է Պոլսեցիների և Ազգային Սահմանադրության մեջ, որովհետև եկեղեցական իրավունքն ունի երկու կողմ՝ արտաքին, որը կարգավորում է եկեղեցւոյ և Պետության փոխհարաբերության հարցը, և ներքին՝ որ կարգավորում է եկեղեցւոյ ներքին կյանքն ու զործունեւորւթյունը:

Հայաստանյայց եկեղեցւոյ Սահմանադրությունը պետք է հիմնավորված լինի մեր եկեղեցական օրենքներով, ավանդություններով և ներկա կյանքի պայմաններով և պահանջներով:

Եկեղեցական նոր Սահմանադրությունը պետք է լինի ամբողջական, հիմնված ժողովրդավարական սկզբունքների վրա և բնդգրկի Հայ եկեղեցւոյ ողջ մարմինը, որտեղ ճՆՏՎԱՍԻ ԼԻՆԵՆ ՄԵՐ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌՈՒՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԵՐԸ, ՅՈՒՐԱՔԱՆՅՅՈՒՐԻ ՈՐՈՇ ՏԵՂԸ, ԳԻՐՔԸ, ՀԵՂԵՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ:

Ազգային-եկեղեցական Սահմանադրության հախագիծը կազմող հանձնաժողովը, Կահիրեի եպիսկոպոսական ժողովի որոշումների լույսի տակ, արդեն անցել է աշխատանքի, և պետք է վստահ լինել, որ այդ

աշխատանքը կկատարվի ձեռնհասությամբ և խղճմտորեն: Եկեղեցական հանձնաժողովի մշակած Սահմանադրության նախագիծը կներկայացվի Գերագույն Հոգևոր Խորհրդին, որն իր կողմից այն հղելու է մեր նվիրապետական մյուս Աթոռներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքություններին, առաջնորդական բեմերին, և լսելուց հետո նրանց դիտողություններն ու բեկադրությունները, վերջնական ձև կտա Սահմանադրության այդ նախագիծին և այն կրերի Ազգային-Եկեղեցական սրբազումագ ժողովին, որտեղ ժողովականների հավանության և

համաձայնության արժանանալուց և փեարկվելուց հետո, կհանձնի Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետին ի վավերացումն, որից հետո միայն նոր Սահմանադրությունը, Եկեղեցական օրենքի ուժ ստացած, կմտնի մեր Եկեղեցական կյանքի մեջ:

Եկեղեցական Սահմանադրությունը մի նոր ու պայծառ ուղի բաց կանի մեր Ս. Եկեղեցու առաջ կազմակերպական-վարչական տեսակետից, ազգային-Եկեղեցական միասնության լույսի տակ, և կլինի Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի գահակալության հիմնական ձեռնարկումներից մեկը:

